

СОТРУДНИЧЕСТВО КОММЕРЧЕСКИХ БАНКОВ И СТРАХОВЫХ КОМПАНИЙ

Г. П. Сергоян

Для Республики Армения, находящейся на новом этапе экономического развития, очень важно сотрудничество коммерческих банков и страховых компаний, потому что при их совместной деятельности формируются те основные принципы, которые будут способствовать увеличению роста экономики. По этой причине следует обратить особое внимание страхованию банковских кредитов, которое давно и успешно проводится в ряде экономически развитых стран мира.

THE COOPERATION OF THE BANKS AND THE INSURANCE COMPANIES

G. P. Serghoyan

For the RA, which is at the new stage of economic growth, the co-operation of the banks and the insurance companies is very important, as in the case of their joint action from the basic principles, which will favor the Republic's economic development. So it's worth paying special attention on the bank risks' insurance, which is swung in many economically developed countries.

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԴՀ լաբորանտ, դասախոս

Երկրի հարկային համակարգը հանդիսանում է ամբողջ տնտեսական համակարգի առանցքային բաղադրիչներից մեկը, որը կարելի է բնութագրել որպես քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ գործոնների ազդեցության ներքո ձևավորվող բարդ ու դինամիկ կառույց:

Հարկային համակարգի կատարելագործման, բարեփոխման հիմնական խնդիրը համակարգում այնպիսի փոփոխությունների կիրառումն է, որոնք կնպաստեն հարկային վարչարարության պարզեցմանը, հարկատուների հարկերից խուսափելու հնարավորությունների նվազմանը:

Հարկային բարեփոխումներին ուղղված միջոցառումները պետք է հաշվի առնեն հետևյալ 4 բաղադրիչները՝ պարզեցում, ձեռնարկվող քայլերի հեռանկարային ներգործություն, հարկային մուտքերի մակարդակի պահպանում և երկրում տարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության հետ համապատասխանություն: Շատ ավելի բարդ խնդիր է, երբ իրականացվում են մի քանի բարեփոխումներ միաժամանակ, որը դժվարեցնում է որևէ մեկ բարեփոխման արդյունքում ստացվող արդյունքի գնահատումը:

ՀՀ-ում հարկային համակարգի օրենսդրական հիմքերը դրվեցին 1992թ.-ին,

երբ ուժի մեջ մտան «Ձեռնարկություններից, կազմակերպություններից և քաղաքացիներց գանձվող հարկերի մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը և «Հարկերի և տուրքերի մասին» ՀՀ օրենքը: Նոր կազմավորվող հարկային համակարգը որոշակի անհամապատասխանության մեջ էր գտնվում տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումների և հարկատուների միջև ձևավորվող հարաբերությունների հետ: Օրենսդրությամբ չափազանց խիստ պատժամիջոցներ էին սահմանվում խախտումների համար: Անշուշտ ստեղծվեց անհրաժեշտություն հարկային բեռի թեթևացման առումով:

Հարկային համակարգի նոր սերնդի բարեփոխումների սկիզբ դրվեց 1997թ.-ին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Այս օրենքով կրճատվեց հարկերի թիվը, և մեղմ պատժամիջոցներ սահմանվեցին հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Հարկային բարեփոխումներ կատարվեցին նաև առանձին հարկատեսակների հետ կապված հարաբերությունները կանոնակարգող օրենքներում:

Իրականացվող բարեփոխումները հանգեցրեցին նրան, որ երկրում փոխվեց հարկային եկամուտների կառուցվածքը: Եթե հարկային համակարգի կազմավորման սկզբնական տարիներին հարկային մուտքեր ապահովող հարկատեսակը շահութահարկն էր /1995թ.-ին շահութահարկը կազմել է հարկային եկամուտների 42.7%-ը/, ապա հետագայում հարկային եկամուտների կառուցվածքում գեարկշռող դարձան անուղղակի հարկերը և հատկապես ԱԱՀ-ն: Աղյուսակ 1-ում ներկայացված է հարկային եկամուտների կազմում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող հարկատեսակների չափը հարկային եկամուտների և ՀՆԱ-ի կազմում:

Ավելացված արժեքի հարկը հարկման պրակտիկայում առաջին անգամ կիրառվել է 20-րդ դարի 50-կան թթ. Ֆրանսիայում: Ներկա ժամանակաշրջանում աշխարհի ավելի քան 40 երկրների հարկային համակարգի կառուցվածքում այն զբաղեցնում է մեծ տեղ: Ավելացված արժեքի հարկի՝ հարկային համակարգում ներդնելու գաղափարը առաջարկվել է 1954թ. ֆրանսիացի Մ. Լորեի կողմից: Ներկա ժամանակաշրջանում ԱԱՀ-ի հետ առնչվող հարկային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ ԱԺ-ի կողմից 1997թ.-ի մայիսի 14-ին ընդունված և 1997թ.-ի հուլիսի 1-ից գործողության մեջ դրված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով¹: 1998-2006 թթ. ժամանակահատվածում ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում 30.3-ից աճել է մինչև 50.4%-ի, իսկ ՀՆԱ-ում՝ 3.3-ից մինչև 8.0-ի: 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամի հետևանքով ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում 53.2-ից նվազել է մինչև 50.4%-ի, իսկ ՀՆԱ-ում 8.7-ից մինչև 8.0-ի: Սակայն 2010 թվականին ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում ավելացել է 2.2 %-ային կետով, ՀՆԱ-ի մեջ՝ 1.4 %-ային կետով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման կարևորությամբ երկրորդ աղբյուրը շահութահարկն է: Այս հարկատեսակը կարգավորող օրենքը նշանակալի փոփոխությունների է ենթարկվել²: 1998թ.-ին փոխվեց շահութահար-

¹ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք /ընդունված 1997թ.-ի մայիսի 14-ին/:

² «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք /ընդունված 1997թ.-ի հուլիսի 30-ին/:

կի հաշվարկման սանդղակը և դրույքաչափը: Կարևոր քայլ պետք է համարել շահութահարկի դրույքաչափերի նվազեցումը: Այսպես, մինչև 1997թ. բարեփոխումները շահութահարկի դրույքաչափերը 4 անգամ փոփոխության ենթարկվեցին, որոնց արդյունքում սկսեց գործել 12, 18, 25 և 30%% սանդղակը: 1998թ. ընդունված օրենքով դրույքաչափերի քանակը նվազեցվեց մինչև 15 և 25 %% , այնուհետև 2001 թվականի հունվարի 1-ից սահմանվեց մեկ միասնական 20%-ոց դրույքաչափը:

Շահութահարկից պետական բյուջեի եկամուտները դիտարկվող ժամանակահատվածում լուրջ վայրիվերումների են ենթարկվել: Օրինակ, 1995 թվականին շահութահարկը կազմել է հարկային եկամուտների 42.6%-ը կամ ՀՆԱ-ի 4.6 %-ը:

Աղյուսակ³

Ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտների և ՀՆԱ-ի կազմում 1998-2010թթ.

	1998	2000	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ավելացված արժեքի հարկ											
Բացարձակ եկամուտները /մլրդ. դրամ/	59.5	66.8	95	107.8	117.9	146.8	165.9	248.1	318.3	254.2	301.8
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում %	30.3	46.5	51.2	50.8	47.1	48.3	46.1	51.2	53.2	50.4	52.6
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում %	3.3	6.5	7.0	6.7	6.2	6.5	6.2	7.9	8.7	8.0	9.4
Շահութահարկ											
Բացարձակ եկամուտները /մլրդ. դրամ/	12.3	20.4	17.4	17.7	32.0	46.6	65.3	75.5	86.2	81.8	77.8
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում%	9.4	14.2	9.4	8.4	12.8	15.3	18.2	15.6	14.3	16.2	13.6
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ %	1.3	2.0	1.3	1.1	1.7	2.1	2.5	2.4	2.4	2.6	2.4
Ակցիզային հարկ											
Բացարձակ եկամուտները /մլրդ. դրամ/	19.9	26.2	35.3	39.1	40.7	38.6	39.9	41.5	45.8	42.7	48.2
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում%	15.3	18.2	19.0	18.4	16.3	12.6	11.1	8.5	7.6	8.4	8.4
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում %	2.1	2.5	2.6	2.4	2.2	1.7	1.5	1.3	1.3	1.4	1.5
Եկամտահարկ											
Բացարձակ եկամուտները /մլրդ. դրամ/	13.5	13.4	12.5	16.7	20.4	26.6	35.5	46.8	53.7	60.2	73.9
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում%	10.4	9.3	6.7	7.9	8.2	8.7	10.0	9.6	8.9	11.9	12.9
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում %	1.4	1.3	0.9	1.0	1.1	1.2	1.3	1.5	1.5	1.9	2.3

³ Աղբյուրը՝ 1998-2010թթ. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, Սոցիալ- տնտեսական վիճակը Հայաստանում 2000-2009թթ, հունվար-դեկտեմբեր:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում⁴ 2004 թ.-ին շահութահարկից մուտքերը ավելացան և կազմեցին հարկային եկամուտների և ՀՆԱ-ի համապատասխանաբար 12.8% և 1.7%: 1998-2009 թթ. շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում 9.4-ից աճել է մինչև 16.2%-ի, իսկ ՀՆԱ-ում՝ 1.3-ից մինչև 2.6-ի: Իսկ 2010 թվականին, 2009 թվականի համեմատ, շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում նվազել է 2.6%-ային կետով:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի բարեփոխված տարբերակը ուժի մեջ մտավ 1997 թ.-ի հուլիսի 1-ին, իսկ 2000թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Ակցիզային հարկի մասին» նոր օրենքով կրճատվեց հարկման ենթակա ապրանքախմբերի թիվը և վերանայվեց հարկի հաշվարկման բազան: Ներկայումս ակցիզային հարկը պետական բյուջեի հարկային եկամուտների ապահովման մասով ՀՀ-ում երրորդն է: 2010թ.-ին հավաքագրվել է 48.2 մլրդ դրամի ակցիզային հարկ, որը կազմել է ՀՆԱ-ի 1.5 %-ը, 2009 թվականի 1.4 %-ի փոխարեն:

Հաջորդ հարկատեսակը հարկային եկամուտների ձևավորման գործում նշանակալի դեր ունեցող եկամտահարկն է: 1998թ. հունվարի 1-ից սկսեց կիրառվել 15, 25, 30%% սանդղակը, իսկ եկամտահարկի նվազագույն շեմ սահմանվեց 8 հազար դրամ: 2002թ.-ից «եկամտահարկի մասին» օրենքում նոր փոփոխություններ կատարվեցին, որոնց արդյունքում պարզեցվեց հարկի հաշվարկման կարգը, չհարկվող շեմ սահմանվեց 20 հազար դրամը /1999թ.-ին՝ 17 հազար դրամ, 2000թ.-ին՝ 28 հազար դրամ/ և կիրառության մեջ դրվեց երկչափ սանդղակ՝ 10 և 20 %% դրույքաչափերով:

Հետագա տարիներին փոփոխության ենթարկվեց հարկման նվազագույն շեմը՝ 2010թ-ին կազմելով 30 հազար դրամ, իսկ 2011թ.-ին 32500 դրամ: 1995-2000թթ. եկամտահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում եղել է 10.0%:

Եկամտահարկի օրենսդրության բարեփոխումների իմաստը հարկատուների համար դրա բեռի թեթևացումն էր, ինչը ենթադրում էր, որ կհանգեցնի ստվերային եկամուտների ծավալների նվազմանը: 2009 թվականին եկամտահարկը կազմել է ՀՆԱ-ի 1.9 %՝ 2008 թվականի 1.5%-ի փոխարեն: 2010թ. կազմել է հարկային եկամուտների 12.9%-ը՝ 2009 թվականի 11.9%-ի փոխարեն: Համեմատության համար նշենք, որ զարգացած տնտեսությամբ երկրներում եկամտահարկի հաշվին ապահովվում է պետական բյուջեի հարկային եկամուտների մինչև 44%-ը:

Հայաստանի Հանրապետությունում 1994 թվականից մինչև 2010 թվականը հարկային եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 10.8 - 17.9 տոկոս /աղյուսակ 2/:

ՀՀ հարկային համակարգում գերիշխում են անուղղակի հարկերը: Ուղղակի հարկատեսակները, չնայած դրանց գծով եկամուտների հավաքագրման ծավալների շարունակական աճին, ապահովում են պետական բյուջեի հարկային եկամուտների միայն 28.2%-ը:

⁴ Շահութահարկի մասին օրենքում փոփոխություն կատարվեց, որով սահմանվեց շահութահարկի նվազագույն մեծություն՝ արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 %-ը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ 1%-ի չափով:

Շուկայական հարաբերությունների անցման սկզբնական փուլում շատ երկրներում իրականացվող հարկային բարեփոխումներին զուգահեռ նկատելի է ստվերային հատվածի աճ: Անշուշտ այս պարագայում տրամաբանական է թվում ենթադրությունն այն մասին, որ հարկային մուտքերի մակարդակը բարձր է ցածր դրույքաչափերի կիրառման արդյունքում, և ընդհակառակը՝ ցածր՝ բարձր դրույքաչափերի պարագայում:

Աղյուսակ 2

**ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի հարաբերակցությունը
ՀՆԱ-ի նկատմամբ 1998-2010թթ.**

	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հարկային եկամուտներ /ՀՆԱ-ի նկատմամբ, %	13.1	15.1	13.9	13.2	13.6	13.1	13.1	13.6	13.5	15.4	16.8	16.2	17.9

Մինչդեռ եկամուտների հավաքագրման մակարդակի և դրույքաչափերի միջև հակադարձ համեմատական կապը ոչ բնութագրիչ ցուցանիշ է: Շատ կարևոր նշանակություն ունի հարկային վարչարարությունը: Տեսական հետազոտությունները ցույց են տալիս, որ հարկերից խուսափելու պատճառներից ամենատեսականը հարկային վարչարարության բավարար մակարդակի բացակայությունն է:

Այսպիսով՝ հարկային համակարգի կատարելագործման ուղղված միջոցառումների համակարգը պետք է զործի համահունչ՝ պետության և հարկատուի շահերի միջև հավասարակշռության առավելագույն ապահովմամբ: Հարկային վարչարարության կատարելագործումը և ստվերային դաշտի կրճատմանը ուղղված միջոցառումները պետք է լավագույն ձևով ապահովեն եկամուտների հավաքագրման և տնտեսության ակտիվության մակարդակների միջև համամասնությունը:

ОГСУАНОРԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբեր, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան
2. Налоги/Под ред. *Д. Г. Черника*. М.: Финансы и статистика, 2000
3. Налоги и налогообложение. 3-е изд./ Под. ред. *М. В. Романовского и О. В. Врублевской*, СПб.: Питер, 2002

**РОЛЬ НАЛОГОВОЙ РЕФОРМЫ В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ ДОХОДОВ
ГОСУДАРСТВЕННОГО БЮДЖЕТА**

Г. А. Хачатрян

В условиях современной рыночной экономики налоговые реформы имеют направленность как к накоплению государственного бюджета доходами, так и призваны обеспечить экономический уровень страны.

В статье детально представлены изменения по части отдельных видов налога. Указываются основные направления государственных реформ.

THE ROLE OF TAX REFORMS IN THE CONTEXT OF FORMATION OF STATE BUDGET INCOMES

G. A. Khachatryan

In the modern conditions of market economy the tax reforms are inclined to complete the state budget with incomes and to provide a high level of economic activity for the country as well. The article presents the changes concerning the separate tax forms. Besides it points out the main directions of tax reforms.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վ. Յ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊԾՀ ասպիրանտ

Ա. Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՊԾՀ մագիստրոս

Իրենց ճյուղում երկար և արդյունավետ մրցակցելու, մրցակիցների նկատմամբ առաջատար դիրք զբաղեցնելու համար կազմակերպությունները մշակում ու իրագործում են մրցակցային ռազմավարություն: Նրանք միայն ճկուն և դինամիկ մրցակցային ռազմավարության շնորհիվ կարող են ապահովել մրցակցային առավելություններ և բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը: Ուստի կազմակերպության մրցակցային ռազմավարությունը հանդիսանում է մրցակցային պայքարում հաջողության հասնելու պարտադիր պայմաններից մեկը:

Մրցակցային ռազմավարության գործընթացի կազմակերպման համար մեթոդաբանական մեծ նշանակություն է ձեռք բերում ռազմավարական վերլուծության փուլը: Գիտական գրականության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ վերջինս հաջորդում է նպատակների ձևավորմանը՝ հանդիսանալով ռազմավարության՝ որպես գործընթացի հաջորդական փուլը: Սակայն ներկա տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններում ռազմավարական վերլուծությունը դուրս է գալիս այդ տեսակետի շրջանակներից և բնութագրվում իբրև ռազմավարության գործընթացի բոլոր տարրերի ձևավորման հիմքն ու անմիջական բաղադրիչը:

Ելնելով մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումներից և մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներից՝